Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարի 2019 թ.
մայիսի 30-ի N 188-Ն հրամանի

## ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎԸ

1. Քրեակատարողական ծառայողի վկայականը (այսուհետ՝ Վկայական)՝ համաձայն Ձև 1-ի, բաղկացած է երեք մասից՝

1) 70x100 մմ չափսի երկկողմանի ծալվող սև կաշվե պատյան (այսուհետ՝ Պատյան)՝ համաձայն Ձև 2-ի,

2) Պատյանի ներսում ամրացված է 50 մմ տրամագծով, 1.2 մմ հաստությամբ, 5 մմ ուռուցիկ գոգավորությամբ մետաղյա տարբերանշան (այսուհետ՝ Տարբերանշան)՝ համաձայն Ձև 3-ի,

3) Պատյանի ներսում պլաստիկ շերտի տակ տեղադրվող 85.60x53.98 մմ չափսի պլաստիկ քարտը (այսուհետ՝ Քարտ)՝ համաձայն Ձև 4-ի:

2. Տարբերանշանն ունի հերթական համար, որը համընկնում է Քարտի քառանիշ համարի հետ:

3. Քարտը տեղադրվում է Պատյանի ներսի աջ հատվածում, թափանցիկ շերտի տակ: Քարտն ունի հերթական քառանիշ համար:

4. Քարտի վրա առկա է քրեակատարողական ծառայողի 25x35 մմ չափսի լուսանկար՝ քրեակատարողական ծառայողի համազգեստով: Քրեակատարողական ծառայողը Վկայականի համար լուսանկարվում է կիսելով, առանց գլխարկի: Լուսանկարից ներքև կատարվում է նշում Վկայականի վավերականության ժամկետի վերաբերյալ:

5. Քարտի վրա իրար հաջորդող դաշտերում տպագրվում է քրեակատարողական ծառայողի կոչումը, անունը, ազգանունը, հայրանունը, զբաղեցրած պաշտոնը, նշում է կատարվում հաշվեցուցակային զենք պահելու և կրելու իրավունքի մասին:

6. Քարտի ներքևի հատվածում նշվում է Վկայականը տրամադրող պաշտոնատար անձի պաշտոնը, անվան առաջին տառը, ազգանունը և առանձնացվում է ստորագրության հատվածը:

7. Քարտի դարձերեսին նշվում են քրեակատարողական ծառայողի տվյալները՝ անգլերեն և ռուսերեն լեզուներով:

**Ձև 1**




**Ձև 2**



**Ձև 3**




**Ձև 4**

